փոխելու համար։ „Journal des Debats“ լրագիրը, մանաւանդ լինելով այն իրաւունքներ ունեցող, որ Տունիսի գեմ դործեց դորքերի մէջ կան մի մի գունդ ֆրանսիական իրաւաբանքներ դորաբաժնից, նմանապէս է, որ այժմեան արշաւանքը կը կատարեցուցանէ ֆրանսիական դորքերի կազմակերպութիւնը, որովհետև արշաւանքին մասնակցող գունդերը կը տարածեն իրանց դորաբաժինների մէջ գիտակցական այժ և բարոյական եռանդ, որանց ներշնչում է պատերազմը։

„Հոմաթ“ ընկերութիւնը հետևեալ կերպով նկարագրում է ֆրանսիական գնդապետ Ֆլատերսի ուղեկիցներին ջարդելը։ Երբ Ֆլատերս իր ուղեկից ֆրանսիացիներ հետ անցնում էր անապատից, տուաբերդները, իջնելով իրանց բլուրներից և թաքնվելով ուղաների հօտի եռանը, անձկանի կերպով մոտեցան ֆրանսիացիներին։ Նիզակներով, սրերով և դաշոյներով զինաւորված այդ վայրենիները փոխեցուցին այդ կրակոտ գէնքից և մատդատար են լինում տարը գէնքով պատերազմելու ժամանակ։ Պատերազմը սկսվեցաւ յիսուն քայլ հեռաւորութեան վրա։ Ֆրանսիացիները վայրենիների յարձակմանը հրացաններով պատասխանեցին և շատերին սպանեցին։ Դրանից յետոյ տուաբերդները շտապով մոտեցան ֆրանսիացիներին և ջարդեցին բոլորին։

ԱՆԳԼԻԱ

Լօնդօնից լրագիրներին հաղորդում են հետևեալ անցեալութիւնները։ Վաղուց Անգլիայի հասարակութեան ուշադրութիւնը դարձած է իրլանդական կալուածական նոր օրէնքի վրա։ Մի քանի անգամ լրագիրները մանրամասն և գրական անցեալութիւններ ասեցին այդ օրէնքի բովանդակութեան մասին և թէպէտ նրանք միմեանց հակասում էին, բայց յայտնի միջոցներ կարող էին բոլորովին ճիշդ լինել, որովհետև այդ օրէնքի նախագիծը մեզ ասս անգամ փոփոխութիւնների է ենթարկվել։

Կալուածական նոր օրէնքի առաջին բաժինը, որ նուիրված է ֆերմերների իրաւունքներին, բաւական ընդարձակ և բարդագրեալ է։ Օրինագիծը հասարակաց ժողովին ներկայացնելու միւս օրը իրլանդացի պատգամաւորները ասում էին, որ օրինագծի մասին ոչինչ կարծիք չեն կարող յայտնել, մինչև նրան հիմնաւորապէս չուսումնասիրեն։ Օրինագծի մէջ երեք նորութիւններ կան. 1) Ֆերմերը իրաւունք ունի իր վարձած երկիրը ուրիշի յանձնել։ 1870 թուականի օրէնքի հաստատած այդ իրաւունքը ունէին մի քանի նահանգների ֆերմերները, իսկ այժմ նա տուած է բոլոր իրլանդացիներին։ 2) Պէտք է հիմնել կալուածական դատարան և նրան մեծ իրաւունքներ տալ կալուածական իրաւունքի սուրբեր նշանակելու համար։ 3) Իրանց կալուածներից ֆերմերներին արտաքսող լորդերը այնպիսի վարձատրութիւն պէտք է տան ֆերմերներին, որ լորդերը տարեցված կը լինեն միայն արտաքսել կարգի գէպքում արտաքսել ֆերմերներին։

Ինչպէս երևում է իրլանդացիների երեք պահանջներից առաջին երեքուք տասնութերորդ դարից նրանց տուած են, իսկ երրորդ պահանջը սահմանափակված է։ Իրլանդացիներին հարիւր չէ մեծ վարձատրութիւն, երբ նրանց արտաքսում են, այլ հարիւր է, որ ֆերմերները ապահով լինեն արտաքսելուց։

Օրէնքի երրորդ բաժինը միջոց է տալիս ֆերմերներին փոխատուութեամբ, կամ մի այլ ձևով գնել իրանց ֆերմաները։ Այդ հանգամանքը շատ հետաքրքիր է Գարնէլի, որովհետև նա չէր հաստատում, որ իրլանդացիների երեք պահանջների կատարելը գործնական օգուտներ տար։ Ամբողջ օրինագիծը ոչ թէ տասը, այլ և երկու տարի առաջ կարող էր յետաձգվելու և քննութեան երկայն։ Հանգիստների ժողովի մեծ կարգուսութեան աչք անդամները գրժատարութեամբ կընդունէին այդ օրինագիծը, եթէ Գլադստոն չը հաստատեր, որ իրլանդիայի ներքին պատերազմ է սպառնում։ Կառավարչական շրջանները այն եզրակացութեան են հասել, որ բանտարները թոյլ չեն տայ հայածել իրլանդացիներին մի քանի լորդերի պատճառով։

Հանգիստների ժողովի անդամ լորդերը սարսափած կը լինեն քաւարկել այդ օրինագիծը, վախենալով ապագայ ընտրութիւններից, բայց լորդերի ժողովը, անկախ լինելով ընտրողներից, կաշխատի յայտնել իր հանձնայնութիւնը օրէնքի սկզբունքի հետ, բայց մի և նոյն ժամանակ նրան այնպէս կը փոփոխէ, որ օրինագիծը կը կորցնէ իր նշանակութիւնը։

Խոսգէս ամեն բան կախված է Գլադստոնի եռանդից և հաստատամտութիւնից։ Եթէ լորդերը կիմանան, որ նա վճռել է անպատճառ անցկացնել օրէնքը, նրանք կը զգուշանան անբարեհաճութեամբ ասելի ասելուց, որ կարող է մեծ փոփոխութիւններին ենթարկել պարլամենտական այժմեան նստաշրջանը։ Գարնէլի արտաքսած ճառից երևում է, որ նա և իր կողմնակիցները Իրլանդիայի համար բաւական նպաստաւոր չեն համարում օրէնքի առաջին մասը։ Կամբրլի եպիսկոպոսները մի մասնաժողով են նշանակել այդ օրէնքը քննելու համար և, եթէ մասնաժողովը կը գտնէ, որ միջոց կայ ֆերմերներին հաշտեցնելու օրինագծի այդ մասի հետ, նրանք գործ կը դնեն իրանց բոլոր ազդեցութիւնը, որպէս զի նրանց համար ասելի Գարնէլի և կալուածական միութեան հեղինակութեանը ՇԱՍՆ։

Այժմ արտաքին գործերից ոչ մէկը չէ անհանգստացնում անգլիացիներին, բացի Ֆրանսիայի պատերազմական պատրաստութիւնները Տունիսի գեմ։ Անգլիացիները չեն հաստատում Ֆրանսիական կառավարութեան այդ ձեռնարկութիւնը։ Ամենքը համոզված են, որ Ֆրանսիայի կողմից անմտութիւն է զայրացնել Խաղալիային, որ կարող է վատագոյր գրացի լինել, եթէ ընդհանուր եւրոպական պատերազմ պատահի։ Ֆրանսիայի գարմանալի զգուշութիւնը վերջին տասը տարիների ընթացքում մեծ նշանակութիւն առաց նրա պետական մարդկերանցը, բայց Տունիսի գործը այնքան վատագոյր է, որ անգլիացիները գարմանում են, թէ ի՞նչպէս Ֆրանսիան չէ նկատում այդ վատը։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒԱՏԻՑ

—

Վան, մարտի 26

Պատերազմի խառնութեամբ ասուրք կը հաստատէ կառավարութիւնը այն ժողովրդին որ տարու ազատներէն դեռ չէ ազատած բոլորովին։ Բազմաթիւ հարցմանութիւններ, որք վատութեան մէջ գիրար կը գերազանցեն, գիւղեր կը պատրաստեն հաստատել ասուրքեր, որք ոչ թէ գանձը պիտի մտնին, այլ պաշտանէից յանձնուած են (հաստատել եղած են) ի հաշիւ ամասանաց։ Պատերազմական պատրաստութեանց համար ինչպէս ուրիշ գաւառներէ, նոյնպէս և վանէն զորք ուղուեցաւ, բայց գինուորական հրամանատար Նազիֆ փաշան պատասխանեց կ. Գալիս հեռագրով թէ ոչ միայն վանէն չենք կրնար զորք իրեն դարս, այլ և հարկաւոր է չուսով զորք իրեն վան հայոց շրջանից առաջան առնելու։ Այդ հեռագրին վրայ լուր եկաւ թէ 3—4000-ի չափ զորքեր պիտի գան վան։ Այժմ հարցիս 1000 հոգի կայ այստեղ գինուորական մարդ։ Կառավարութեան երկիւղն այնչափ է հայերէ, որ պաշտպանութեան վիճակի պէս բան մը հրատարակած է ի վան։ Մի ասիս է որ լրագիրը չեմը ընդուներ կ. Գալիս, որդէն Տիգրանէն բնաւ ոչ. փասն դի թիգատարաց բերած լրագիրներն վատ կը գնէ կառավարութիւնն ու չը յանձնէր։ Հեռագիրներ ոչ ունի որոց կը հասնին քան թիգատարն, նամակներն ալ բացուած դուրս կը գան թիգատարէն։ Թուաստանէն և. կոց ս և իսկ մարդ հարցաքննութեան կենթարկեն և գրեթէ անհնար է որ մարդ կարենայ ըստ. հոգէն դուրս գալ։ Թատրոնական ներկայացմանը արգելուցան այստեղ կառավարութեան հրամանաւ. ապրելու հանդիսաւոր գուսանութիւնն ալ յետաձգել ուզեց, բայց դեռ չը յաջողեցաւ. թիւրք ժողովուրդը անարեկ վիճակի մէջ է. Ամեն որ լուր կը պատի իրենց մէջ թէ այս ինչ որ հանձնաժողով կատարած մի պիտի ասեն հայոց առանձնայ. շատեր կը վախենան մեկնիլ գնալ, որ մի գուցէ հայոց կատարածին զոհ լինին. Ամենք կը խնդրեն իրենց ծանօթ հայերէ ապատել զիրենք կատարածին արդ. իսկ ասուածն դուրս չեմնգնեցուն թիւ չը կայ. ձիշտ հանգարտ պատահար մը երևան եկած է ի վան. փոքր մը ասրի առաջ հայերն միշտ ան ու գոցի մէջ էին ասանկայ. բնաւէն, իսկ այժմ կարդը փոխուեցաւ եկած է վախնալ առաջինեներէն։

Կառավարութիւնը խիստ հանգուցութիւն մը ձեռք առաւ արդիւնքի դարդ. որ բերդէն արքունի հրացաններ չը գոցեան, ժամեն, ինչպէս ասրին երկար ժամանակ. Դարձեալ մանրակրկիտ հետազօտութեամբ կը փնտռէ թէ որոց քով ավրութեան հրացան կայ. Անցեալներ մի զորական բռնուեցաւ յիշուած յանցանքով. որ դեռ չը գատապարտեցաւ. դի ապառնացաւ մասնակ բոլոր բարձրաստիճան պաշտօնեայքը. որ նմանորինակ յանցանքն ունեցած են. Բազմաթիւ գիւղեր մէջ ինքնապաշտպանութեան համար ընկերութիւններ կազմուած են հայոց մէջ. ասրով գրացի քրդոց կամ թիւրքոց երկիւղի պատճառ եղած են. կառավարութիւնը այնպիսոց մարդիկի հրացան բաժնեց գաղանի. Նոյնպէս ծանօթ է արդէն որ քաղաքարանի ասանկայ ալ բաշխեց. Բայց ցաւալի է ասել որ կառավարութիւնը ամեն դիտակ վատ ասած է հայոց դէմ գործելու մէջ. բաղկրաց թշնամութիւն կանել, կարանակ ուրդարդիներ. կը պաշտպանէ չարագործ հարամարդիներ քիւրդեր. կը քաջալերէ գանոնք. իսկ հայոց վրա կը ցանկայ գոյդն յանցանք մը գանել որ խոսքի. գասէ. Պաշկալանու մէջ Ցոմանենէս անուն վարդապետ մը իր վրայ յարձակող մի քուրդ ապանելուն համար. հանգամանք գարաւոր արտաքսութեանց բերու բանտարկեց գնա. առանց մանաձելու թէ 1. եկեղեցական մը բանտարկութիւնը հասարակ ուրդարդաց կարդը այն ասեն միայն ներելի է. երբ ուրիշ հասարաւոր վրան և երբ եկեղեցական կարդն առնուի վրայէն. Առանց այդ պարագայից պէտք է առաջարդարանին յանձնուի ամբաստանեալ եկեղեցական մը մինչև բանտարկեան վախնանը. ինչպէս որ սուլթանեան կ. Գալսոյ պարիարքութեան հաստատութիւնն մինչև ցարդ արտաքսութիւն տուած էին այդմ. 2. Խնդրելիք պաշտպանելու համար գիտացի ուրդարդին ապանելուն համար ոչ թէ պէտք է և օրէնք կայ գաղտարարել այնպիսին, ընդհանրական պարդն պէտք է ընդունի. ինչպէս որ սուլթանը գեռ քանի մը չարաթէ հրաման հանեց. Բայց ասզայս կառավարութիւնը կարեւորութիւն չը տար դրանց. Նրա ջանքն է լքուցանել հայոց սրտերը որ ձեռք չը վերցնեն թիւրքոց և քրդոց գեմ. Բայց չի գիտեն դարդ հայերը. չեն լքանիր. 4. Ուրիշ հայեր ալ բռնան են, որք իրենց անձը պաշտպանելու համար գիւրդ ապանեան են. մեծ ապատարութիւն արեր է այս բան կառավարութեան վրայ. կը ջանայ դարձնել հայերը. Հաշտասիրաբար ուղարկեցաւ մը կայ Մարկոս երկրէն Պուլլյան գէյ անուն. դրա ապանութեանց թիւը 1000-ն գասաս չէ. այդպես ամենայնիւ. Նա ապատ հանգամանքի կը շրջի քաղաքին մէջ. թէև բոլորն ալ ասուցուած են վրան, իսկ Ցոմանենէս վարդապետ հանգամանքի բանտարկեց և թիւրքերու կարդի' ի բանտ դրուած է. Այս մասին անդր. և թէ ուստ հիւպատոսներն դիտաղութիւն տրին թէպէտ, բայց կառավարութիւնը իր ընթացքէն չը շեղցաւ, և չանաց նոցա առ այժմ. Տեսնենք դեռ.

Իրր մի ասիս է որ հայոց. թիրքոց և քրդոց դէնընկերութիւն պատերազմած է կառավարութիւնը. ասկայն իրարանցի վախենալով չեն ուզեր ներգանիլ յիշեալ հրամանին. ասանկանները բան որում մանամասնական են, քրդոց և թիրքոց վրայ գէնք տեսած ժամանակ ալ կը գոցեն, իսկ հայերն ալ կընդիմանան յանձնել. այս եղանակաւ ապարդիւն եկած է նոյն պատուէր. Բայց յայտնի է որ այդ հրամանը կատարութիւնը հայոց համար միայն հատած է, որ բարեբարդարար չը դարձարարի. եթէ ոչ, բնաւ արդարութիւն չէ երկրի մը բնակչաց մէկ մասէն գէնքեր առնուլ և մէկ մասին թողուլ. այդ դարձարութիւնը անգէնների դէնքոց կատարութեան գունէլ ի դատ ուրիշ նշանակութիւն չունի. Բայց հայերն որ քանի ժամանք են թէ իրենցմէ որոց քով գէնք կայ և որչափ ու թիչ տեսակ, բնաւ չեն յայտներ. Լերանցի գաղանապատութեան գաղափարը շատ թերատ և անդոր էր հայոց մէջ, իսկ այժմ բաւական զարդացած է. ոչ միայն այսչափ, այլ և ուրիշ շատ պարագայներու մէջ ալ կը ցցունեն թէ գաղանապատ են, բնաւ իրարու գէմ վիճաբանութիւն չեն տար կառավարութեան առաջ. Բազում անգամ կը գարմանան այս մասին թիւրքեր, որք չը գիտեն այդպիսի զգացում։

Մարտ 8-ի կիրակին Նարաչենու ս. եկեղեցւոյն մէջ խիստ շքեղ հանդիսաւորութեամբ բաց (մեծ պատարագի մէջ ենք) պատարագ մատուցուեցաւ Ամենազարմանալի Աղէքսանդր Բ. կայսեր հոգւոյն համար, զոր երկինք հրաւիրած է Աստուած. Պատարագիչ Իրմանան ս. Հայրիկն էր. յոյժ վարդապետ. Նոյնչափ քանանայ ազատաւոր էին. Ընտրեալ երգեցիկներ դպրութիւն կանէին և անթիւ հայ բազմութիւն մը եկեղեցին բռնուած էր. Թատ. փոխ-հիւպատոս վատեմ. պ. Կամարարկան, իր տիկին և բոլոր հիւպատոսարանին մարդիկ սեւեր կապած ներկայացած էին, ինչպէս և Անգլ. փոխ-հիւպատոսն, պարոնական գարձակատարն, փոխ-նահանգապետն և այլն և այլն. Ս. պատարագէն վերջ Իրմանան հայրիկը գամբանական մը խօսեցաւ վատ սեռով և համառաստակի բացատրեց հանգուցեալ կայսեր բարեգործութիւնները թէ իր ազգարին և թէ արեւելեան քրիստոնէից համար։ Ներկայ ժողովրդեան սիրտը յուզուեցաւ, որ մինչեւ հանդիսէն վերջ ոչ առանց ապաշաւութեան։

Վասպուրականի ինչպէս և բոլոր Հայաստանի հայերը բնական ջերմ համակրութիւն մը ունին ռուսական մեծագոր ազգին դրայ։

Մի և նոյն մարտ 8-ի կիրակին ցորեկեան ժամ 6-ին Աղքանուէր ընկերութեան լսարանին մէջ, որ շատ բազմութիւն կար, յիրկինս վերանոչեալ Աղէքսանդր Բ. կայսեր կենդանագրութիւնն բրաս լսարանին տեսուչը, և բաւական ընդարձակ տեղեկութիւններ տուաւ Ցամանանվեան կայսերական ցեղին վրայ, որ ռուսաց պետութեան սկզբան մեծութեան և փառաց պատճառ եղած է. ժողովուրդը լսելով խանդաղատեցան. գոհունակաց. յիշեալ Աղքանուէր ընկերութեան լսարանին մէջ (որոց անուանն է պ. Մարկոս Նաթանեան) ազգային, քաղաքական և ուսումնական լրոց վրայ տեղեկութիւններ կը հաղորդուին ժողովրդեան ամեն անգամ, որ լրագիրներէն զուրկ մնացած տեղն լսելիք ալ գուրկ չը մնար այսպիսով. կը գրենք որչափ տարի ունենանք։

Մ. Ն.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 ապրիլի. Գեռաման բանկի 5% առմանը առաջին շրջանի արժէք 97 ր. 50 կ., երկրորդ 94 ր. 25 կ., երրորդ 95 ր., չորրորդ 95 ր., հինգերորդ 5% առաջին փոխառութեան առմանը արժէք 224 ր. 75 կ., երկրորդ 217 ր. 50 կ., արեւելեան առաջին փոխառութեան առմանը արժէք 93 ր., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 92 ր. 87 կ., ոսկի 7 ր. 99 կ.։ Ռուսաց 1 բուրլ Լօնդոնի վրա արժէք 24,56 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէք 210 մարկ, Փարիզի վրա արժէք 259 ֆրանկ։ Բորսայի արտանգրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ